

3415



# Ի. ԱՍՈԼԻՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՆԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆ  
ԱՌԹԻՎ

3Կ33  
հ-33

ԳԱՂԱՔԻՆԱ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1940

27 JUN 2005

ԳՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲԱԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅՆԻ

14 NOV 2008

## Ի. ԱՏԱԼԻՆ

3K33  
Ճ-33 ԿՄ.

ՃԱՌ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՆԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆ ԱՌԹԻՎԸ

Արտասահմած կրթմի պալատում 1935 թ. մայիսի 4-ին

62  
63



1831

Ч

И. СТАЛИН

РЕЧЬ В КРЕМЛЕВСКОМ ДВОРЦЕ НА ВЫПУСКЕ  
АКАДЕМИКОВ КРАСНОЙ АРМИИ

Государственное издательство политической литературы  
Ереван • 1940

Ակերներ, չի կարելի ժխտել, վոր վերջին ժամանակներս մենք մեծ հաջողություններ ենք ունեցել ինչպես շինարարության, այնպես ել կառավարման բնագավառում։ Այդ կապակցությամբ մեզ մոտ չափազանց շատ են խոսում զեկագարների մասուցած ծառայությունների մասին, առաջնորդների ծառայությունների մասին։ Նրանց են վերագրում մեր բոլոր, համարյա բոլոր նվաճումները։ Այդ, իհարկե, ճիշտ չե և սիալ ե։ Բանը միայն առաջնորդների մեջ չե։ Բայց դրա մասին չե, վոր կուզեյի խոսել այսոր։ Յես կուզենայի միքանի խոսք ասել կադրերի մասին, ընդհանրապես մեր կադրերի և մասնավորապես մեր Կարմիր բանակի կադրերի մասին։

Դուք գիտեք, վոր մենք չին ժամանակից ժառանգություն ստացանք աեխնիկապես հետամնաց ու կետաղքատ, քայլքայլած մի յերկիր։ Չորս տարվա խմբերի այսական պատերազմից քայլքայլած, յերեք տարվա քաղաքացիական պատերազմից կրկին քայլքայ-

ված մէ յերկիր՝ կիսադրապետ ազգաբնակությամբ, ցածը տեխնիկայով, արդյունաբերության առանձին ռազմական բաղկաներով, վորոնք ընկղմած եյին մանրագույն գյուղացիական տնտեսությունների ծովում — ահա՛ ինչպիսի յերկիր ժառանդեցինք մենք անցյալից: Աընդիրն այն եր, վոր այդ յերկիրը միջնադարի ու խավարի ու ելսերից փոխադրել ժամանակակից ինդուստրիայի և մեքենաբացված գյուղատնտեսության ու ելսերի վրա: Ինչպիս տեսնում եք՝ խնդիրը լուրջ եր և դժվարին: Հարցն այսպես եր դրված՝ կամ կլուծենք մենք այդ խնդիրն ամենակարճ ժամանակամիջոցում և կամրապնդենք մեր յերկրում սոցիալիզմը, կամ մենք չենք լուծի այն, և այն ժամանակ տեխնիկավես թույլ ու կուլտուրական տեսակետից խավար մեր յերկիրը կերպնի իր անկախությունը և կդառնա իմպերիալիստական տերությունների խաղի առարկա:

Մեր յերկիրն այն ժամանակ ազրում եր ամենասուկալի սովի շրջան՝ տեխնիկայի բնագավառում: Ինդուստրիայի համար պահպանում եյին մեքենաներ: Մեքենաներ չկային գյուղատնտեսության համար: Մեքենաներ չկային տրանսպորտի համար: Զկար տեխնիկական այն տարրական բազան, առանց վորի աներեւակայելի յեր յերկրի ինդուստրիալ կերպարանափոխութը: Միմիայն առանձին նախադրյալներ կային այդպիսի բազա ստեղծելու համար: Պետք եր ստեղծել առաջնակարգ ինդուստրիա: Այդ ինդուստրիան պետք եր ուղղել գեղի այն կողմը, վոր նա ընդունակ լիներ տեխնիկավես վերակառուցելու վոչ միայն արդյունաբերությունը, այլև գյուղատնտեսությունը, այլև հերկաթուղային տրանսպորտը: Իսկ դրա համար պետք

եր զոհողության անել և ամեն բանում ամենաախտա խնայողություն մտցնել, պետք եր խնայողություն անել թե՛ մնադի, թե՛ դպրացների, թե՛ մանուֆակտուրայի առավարեղում, վորպեսզի անհրաժեշտ միջոցներ կուտակեցինք ինդուստրիա ստեղծելու համար: Տեխնիկայի բնադրավառում սովոր վերացնելու համար այլ ուղի չկար: Այդպես և սովորեցրել մեզ լենինը, և մենք այդ գործում ընթացել ենք լենինի հետքերով:

Հասկանալի յի, վոր այդպիսի մեծ ու դժվարին գործում չեր կարելի համատարած ու արագ հաջողություններ սպասել: Այդպիսի գործում հաջողությունները կարող են միքանի տարի անցնելուց հետո միայն յերեալ: Ուստի անհրաժեշտ եր զինվել ամուր նյարդերով, բոշեկիյան տոկունությամբ ու համառ համրերությամբ, վորպեսզի հաղթահարեցինք առաջնա անհաջողությունները և անշեղորեն առաջ գնայինք դեպի մեծ նպատակը, թույլ չտալով տատանումներ ու անպատահություն մեր շարքերում:

Դուք դիտեք, վոր մենք այդ գործը հենց այդպես ել առաջ տարանք: Բայց մեր վո՞չ-բոլոր ընկերները բավականաչափ նյարդեր, համբերություն ու տոկունություն ունենին; Մեր ընկերների մեջ գտնվեցին մարդկի, վորոնք առաջին խել դժվարությունից հետո սկսեցին նահանջմի կոչ անել: Ասում են, թե «ով հինը հիշի, նրա աչքը դուրս կա»: Այդ, իհարկե, ճիշտ ե: Սակայն մարդը հիշողություն ունի, և մեր աշխատանքի արդյունքներն ամփոփելիս ակամայից հիշում եւ անցյալը: (Ուրախ աշխուժություն դակիթնում): Այդպես ուրեմն՝ մեզ մոտ կային ընկերներ, վորոնք վախեցան դժվարություններից և սկսեցին նահանջի կոչ անել կուտակցությանը: Նրանք ասում եյին, «Մեր ին-

չի՞ն են պետք ձեր ինդուստրացումը և կոլեկտիվացումը, մեքենաները, ու մետալուրգիան, տրակտորները, կոմբայնները, ավտոմոբիլները։ Ավելի լավ կլիներ մեղ ավելի շատ մանուֆակտուրա տայիք, լավ կլիներ, ավելի շատ հումք գնելիք լայն սպառման տապրկաներ արտադրելու համար և ավելի շատ տայիք ազգարնակությանն այն բալոր մանրունքները, վորոնցով գեղեցիկ և մարդկանց կենցաղը։ Մեր հետամնացության պայմաններում ինդուստրիա, այն ել տուածնակարդ ինդուստրիա սուեդելը վաճանդավոր յերազանք է»։

Իհարկե, մենք կարող ենք այն Յ միլիարդ սուբլի վայցուտան, վորը ձեռք ենքնք բերել ամենախիստ իննայողությամբ և ծախսել ենքնք մեր ինդուստրիան սուեդելու համար, մենք կարող ենքնք գործադրել այդ գումարը հումք ներմուծելու և լայն սպառման տարկաների արտադրությունն ուժեղացնելու վրա։ Դա ել իր տեսակի «պլան» և Սակայն այդպիսի «պլանով» մենք չենքնք ունենան վո՞չ մետալուրգիա, վո՞չ մեքենաշինություն, վո՞չ տրակտորներ և ավտոմոբիլներ, վո՞չ ավելիցիա և տանիեր։ Մենք անդեն կլինելիք արագին թշնամիների առաջ։ Մենք կմուլցնենքնք սոցիալիզմի հիմքը մեր յերկուում։ Մենք գերի կլինելիք ներքին ու արտաքին բուրժուազիայի ձեռքին։

Պարզ են, վոր մենք պետք են ընտրություն կատարել յերկու պլանների միջև՝ նահանջի այն պլանի միջև, վորը տանում էր, և չեր կարող չտանել, գեպի սոցիալիզմի պարտությունը, և հարձակման այն պլանի միջև, վորը տանում էր և, ինչպես զիտեք, արդեն հասցեց մեր յերկուում սոցիալիզմի հաղթանակին։

Մենք ընտրեցինք հարձակման պլանը և՝ առաջնացինք լենինյան ուղղելով, հետ մղելով այլ ընկերներին, վորպիս այնպիսի մարդկանց, վորոնք մի կերպ աւսունում եյին միայն իրենց քթի տակ, սակայն աչքերը փակում եյին մեր յերկու մերձավորագույն ապագայի հանդեպ, սոցիալիզմի ապագայի հանդեպ մեր յերկուում։

Բայց այդ ընկերները միշտ չեն, վոր սահմանափակվում եյին քննադատությամբ և պասսիվ դիմադրությամբ։ Նրանք սպասնում եյին մեկ ապատամբություն բարձրացնել կուսակցության մեջ Կենարունական կոմիտեյի ղեմ։ Դեռ ավելին, նրանք մեկանից գոմանց սպասնում եյին գնդակներով։ Բայտ յերեւթին՝ նրանք հույս ունեցին վախեցնել և հարկադրել մեկ չեղուկի լենինյան ուղղուց։ Այդ մարդիկ յերեւ մոռացել եյին, վոր մենք, բոլցելիներս, հասուկ ձեղածքի մարդիկ ենք։ Նրանք մոռացել եյին, վոր բոլցելիներին չես վախեցնի վոչ վախրություններով, վոչ ել սպասնալիքներով։ Նրանք մոռացել եյին, վոր մեզ կոփել եմ և լենինը, մեր տուածնորդը, մեր ուսուցիչը, մեր հայրը, վորը յերկուուղ չգիտեր և յերկուուղ չեր ձանաչում պայքարում։ Նրանք մոռացել եյին, թե վորքան ուժգին են մոլեկնում թշնամիները և վորքան ավելի հիսուերիկայի մեջ են ընկնում հակառակորդները կուսակցության ներսում, այնքան ավելի յեն տաքանում բոլշեվիները նոր պայքարի համար և այնքան ավելի շեշտակի տուածն են շարժվում նրանք։

Հասկանալի յեն, վոր մենք չենք ել մտածել չեղուկի լենինյան ուղղուց։ Դեռ ավելին, ամրանալով այդ ուղղության մենք եւ ավելի շեշտակի տուածն կնացինք, դեն

շալթառելով ճանապարհից բոլոր ու ամեն տեսակի խո-  
չընդուները։ Ճիշտ ե, այդ անելիս մեզ հարի յեղափ  
ճանապարհին մի քիչ տրդրել այդ ընկերներից միքա-  
նիսի կողերը։ Բայց այդաեղ արդեն ճար չկա։ Պետք է  
խոստովանել, վոր յես ել մասնակցել եմ այդ գործին։  
(Քունի ծափահարություններ, «ուռա» բացականչու-  
թյուններ)։

Այս՝ ընկերներ, մենք վստահ քայլերով ու չեշ-  
տակի առաջ ընթացանք մեր յերկրի ինդուստրացման  
ու կոլեկտիվացման ուղիով։ Ցել այժմ արդեն կարելի  
յի անցած համարել այդ ուղին։

Այժմ արդեն բոլորն ել խոստովանում են, վոր  
մենք վիթխարի հաջողություններ ենք ձեռք բերել  
այդ ճանապարհին։ Այժմ բոլորն ել խոստովանում են,  
վոր մենք ունենք արդեն հզոր և առաջնակարգ ար-  
դյունաբերություն, հզոր և մեքենայացված գյուղա-  
տնտեսություն, ծավալվող ու դեպի վեր բարձրացող  
արանսպորտ, կազմակերպված և հիմնալի սպառադին-  
ված Կարմիր բանակի։

Այդ նշանակում ե, վոր մենք հիմնականում արդեն  
վերացրել ենք սովոր շրջանը տեխնիկայի բնագավառում։

Սակայն տեխնիկայի բնագավառում սովոր շրջանը  
վերացնելով, մենք թեակոնսեցինք մի նոր շրջան, յես  
կասեցի՝ սովոր շրջանը մարդկանց բնագավառում,  
կարերի բնագավառում, այնպիսի աշխատողների  
բնագավառում, վորոնք գիտեն թամբել տեխնիկան և  
առաջ մղել նրան։ Բանն այն ե, վոր մենք ունենք  
Փարբերական գործիք, գործարաններ, կոլտնտեսություններ,  
խորհանտեսություններ, բանակ, ունենք տեխնիկա այդ  
ամբողջ գործի համար, բայց պակասում են այն-  
պիսի մարդիկ, վորոնք ունենան բավականաչափ

այնպիսի փորձ, վորն անհրաժեշտ ե տեխնիկայից  
քամելու առավելագույն չափով այն, ինչ վոր կա-  
րելի յե քամել նրանից։ Առաջ մենք ասում ենք, ք-  
որ «տեխնիկան վորոշում և ամեն ինչ»։ Այդ լո-  
գունդը մեզ ողնոյց այն տեսակետից, վոր մենք վե-  
րացրինք սովոր տեխնիկայի բնագավառում և տեխնի-  
կական ամենալայն բազա ստեղծեցինք գործունեյու-  
թյան բոլոր ճյուղերում՝ մեր մարդկանց առաջնակարգ  
տեխնիկայով վիճելու համար։ Այդ շատ լավ է։ Սա-  
կայն դա շատ և շատ քիչ է։ Տեխնիկան շարժման մեջ  
զնելու և մինչեւ վերջն ովտագործելու համար հար-  
կավոր են տեխնիկային տիրապետած մարդիկ, հարկա-  
վոր են այնպիսի կադրեր, վորոնք ընդունակ լինեն  
յուրացնելու և ովտագործելու այդ տեխնիկան՝ ար-  
գեստի բոլոր կանոններով։ Տեխնիկան՝ առանց տեխնի-  
կային տիրապետած մարդկանց՝ մեռած է։ Այն տեխ-  
նիկան, վորին գլխավորում են տեխնիկային տիրապե-  
տած մարդիկ, կարող ե հրաշներ գործել և պետք ե  
գործի։ Ցեթե մեր առաջնակարգ գործարաններում,  
Փարբերական երում, մեր խորհանտեսություններում ու  
կոլտնտեսություններում, մեր տրանսպորտի մըրա,  
մեր Կարմիր բանակում լինելին բավականաչափ այն-  
պիսի կադրեր, վորոնք ընդունակ են թամբել այդ  
տեխնիկան, մեր յերկիրը յեռագատիկ ու քառագատիկ  
ավելի եֆեկտ կստանար, քան ունի այժմ։ Ահա՛ թե  
ինչու այժմ չեշոր պետք ե զնել տեխնիկային տիրա-  
պետած մարդկանց վրա, կարերի վրա, աշխատողնե-  
րի վրա։ Ահա՛ թե ինչու այն չին լոզունդը, թե՝  
«տեխնիկան վորոշում և ամեն ինչ»։ Վորը հանգիստ-  
նում և արդեն անցած շրջանի արտացոլումը, յերբ  
մեզ մոտ սով կար տեխնիկայի բնագավառում, —այժմ

պիտք և կոսխարինսի նոր լողունգով, այն լողունգով,  
թե՝ «կադրելը վորոշում են ամեն ինչ»։ Այդ և այժմ  
դիմովորը։

Կաբելի՞ յէ արդյոք ասել, վոր մեր մարդիկ լիս-  
լին հասկացել ու դիտակցել են այդ նոր լողունգի մեծ  
նշանակությունը։ Յես այդ չեյի ասի։ Հակառակ դեղ-  
քում մենք չեյինք ունենաւ այն այլանդակ վերաբեր-  
մունքը զեպի մարդիկ, գեղի կաղըրը, գեղի աշխա-  
տողները, վոր հաճախ տեսնում ենք մեր պրակտիկա-  
յում։ «Լազգերը վրաշում են ամեն ինչ» լողունգը  
պահանջում է, վոր մեր զեկավարներն ամենահոգա-  
ար վերաբերմունք ցուցաբերեն զեպի մեր աշխատող-  
ները՝ զեպի «փոքրերը» և «մեծերը», ինչ բնադրավա-  
ռում ել աշխատելիս լինեն նրանք, աճեցնեն նրանց  
խնամքով, ողնեն նրանց, յերբ նրանք աջակցության  
կարիք ունեն, իրախոսեն նրանց, յերբ նրանք ցույց  
են տալիս առաջին հաջողությունները, առաջ քաշեն  
նրանց և այլն։ Մինչդեռ գործնականում մի չարք  
զեպքերում մենք ունենք աշխատողների նկատմամբ  
ցուցաբերվող անհոգիքուրովը մատիկ այ-  
լանդակ վերաբերմունքի փաստեր։ Հենց դրանով ել  
խսկափես բացարձում և այն, վոր կոսխարակ մարդ-  
կանց ուսումնասիրելու և ուսումնասիրելուց հետո  
միայն նրանց ապաշտոնի դնելու, հաճախ մարդկանց  
դես ու դեն են նետում, վորվես պեչեմների։ Գնահա-  
տել մեքենաները և սապորտ տալ, թե վորքան տեխ-  
նիկա ունենք մենք գործարաններում և ֆարբիկանե-  
րում։ այդ սովորել ենք։ Սակայն յես չդիմում վոչ մի  
դեպք, վորտեղ նույնքան սիրով սապորտ տան,  
թե քանի մարդ ենք աճեցրել մենք այս-ինչ ժամանա-  
կացրանում և ինչպես ենք ողնել մարդկանց, վորպես-

զի նրանք աճեն ու կովովն աշխատանքի մեջ։ Ինչո՞վ  
ե բացարձում այդ։ Այդ բացարձում և նրանով,  
վոր մեկ մոտ դեռ չեն սովորել գնահատել մարդկանց,  
գնահատել աշխատողներին, գնահատել կաղըրեր։

Յես վերհիշում եմ Սիրիբում պատահած մի դեպք,  
վորտեղ յես մի ժամանակ աքսորի մեջ ելի։ Գործը պա-  
տահեց դարնանը, դետերի վարարման ժամանակ։ Մոտ  
30 հոգի զեպի զետը զնացին՝ լոնելու այն փայտեղե-  
նը, վոր քում եր գաղաղած հոկայտկան վետը։ Յերե-  
կոյան զեմ նրանք դյուռ վերադարձան, բայց առանց  
մեկ ընկերոց։ Այն հարցին, թե վորտեղ և յերեսուն-  
երորդը, նրանք անոտարեր պատասխանցին, թե  
յերեսուներորդն «այնուել մնաց»։ Յերբ յես հարցըի՝  
«ի՞նչպես թե այնուել մնաց», — նրանք նույն անոտար-  
քերությամբ պատասխանցին։ «Ել ի՞նչ ևս հարցուում,  
խեղպիկ և, ելի»։ Յեզ հենց այլտեղ ել նրանցից մեկն  
սկսեց շատարել ինչ-վար տեղ զնալու, հայտարարելով,  
թե՝ «ակետք և գնալ զամբիկը ջրելու»։ Յերբ յես կը-  
տամբեցի, թե նրանք անոտունին ավելի յեն խղճում,  
քան մարդկանց, նրանցից մեկը մյուսների ընդհանուր  
հավանությամբ պատասխանց։ «Ինչո՞ւ խնայինք  
նրանց, այդ մարդկանց։ Մենք մարդիկ միշտ կարող  
ենք ստեղծել։ Խոկ զամբիկի... փորձիր զամբիկի ստեղ-  
ծել»։ (Ընդհանուր աշխուժություն դահլիճում)։ Աչտ  
ձեզ մի շարիկ՝ թիրհս աննշան, բայց չառ բնորոշ։  
Յես կարծում եմ, վոր մեր միքանի զեկավարների  
անոտարեր վերաբերմունքը զեպի մարդիկ, զեպի  
կաղըրերը և մարդկանց զնահատել չկարմնալը մնա-  
ցով և մարդկանց կողմից մարդկանց ցույց տրվող  
այն տարօրինակ վերաբերմունքի, վորը գրսեւրվեց

Հեռավոր Սիրիսի իմ հենց նոր պատմած միջադեպում:

Այդպես ուրեմն, ընկերներ, յեթե մենք ուղում ենք հաջողությամբ վերացնել մարդկանց բնադրավառում գոյություն ունեցող սովոր և հասնել այն բանին, վոր մեր յերկիրն ունենա տեխնիկան առաջ շարժելու և այդ տեխնիկան գործի զնելու ընդունակ բայլականաչափի կադրեր, մենք պետք են ամենից առաջ սովորենք դնահատել մարդկանց, դնահատել կադրերը, դնահատել այն յուբաքանչյուր աշխատողին, վորն ընդունակ ողուս տալ մեր ընդհանուր գործին: Պետք են, վերջապես, հասկանալ, վոր աշխարհում գոյություն ունեցող բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր ու ամենավճռական կապիտալը մարդիկ են, կադրերը: Պետք են հասկանալ, վոր մեր ներկա պայմաններում «կադրերը վորոշում են ամեն ինչ»: Յեթե մենք լսալ ու բազմաթիվ կադրեր ունենանք արդյունաբերության մեջ, գյուղատնտեսության մեջ, տրանսպորտի վրա, բանակում, —ապա մեր յերկիրն անդարտելի կլինի: Յեթե չունենանք այդպիսի կադրեր, մենք կկաղանք յերկու վոտով:

Ավարտելով ձառն՝ թույլ տիեզ կարմիր բանակի շրջանավարտ մեր ակադեմիականների առողջության և բարորության կենացն առաջարկել: Հաջողություննեմ ցանկանում նախանց՝ մեր յերկրի պաշտպանության կազմակերպման ու դեկավարման գործում:

Ծնկերնե՛ր, գուք ավարտեցիք բարձրագույն դպրոցը, և առաջին կոմիսածությունն ստացաք այդտեղ: Սակայն դպրոցը միայն նախապատրաստական աստիճան է: Կադրերի իսկական կոմիսածությունը ձեռք է բերվում դպրոցից գուրս, կենդանի աշխատանքով,

գժվարությունների գեմ պայքարելով, գժվարությունները հաղթահարելով: Հիշեցիք, ընկերներ, վոր լավ են միայն այն կադրերը, վորոնք չեն վախենում գժվարություններից, վորոնք չեն թադրնվում գժվարություններից, այլ ընդհակառակը, գնում են գժվարություններին գեմ-հանդիման՝ գրանք հաղթահարելու ու վերացնելու համար: Դժմարությունների գեմ պայքարումն են միայն կոմիսում իսկական կադրերը: Իսկ յեթե մեր բանակն ունենա բավականոչափ իսկական կոմիսած կադրեր, նա անպարտելի կլինի:

Զեր կենացը, ընկերնե՛ր: (Բուռն ծափահարաթյուններ ամբողջ դահիկում: Բոլորն ել վոտքի յեն կանգնում և բարձրաձայն «ուռա»-ներով վողջունում են ընկեր Ստալինին):



Խմբագիր թ. Ն, Դավթյան  
Համեմատության և ստելիստիկան աշխատանքը  
կատարել է Հ. Մանուկյանը  
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Գոյունանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

---

Գլավլիսի լիազոր Վ. 1115, հրամ. 800  
պատվեր № 71, տիրաժ 6000  
Հանձնվել է արտադրության 25/II 1940 թ.  
Ստորագրվել է տպագրելու 21/III 1940 թ.  
Գինը 10 կ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Յերևան, Ալահյալի պողոտա 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0180099

Файл 10 ч.

И. СТАЛИН

РЕЧЬ В КРЕМЛЕВСКОМ ДВОРЦЕ  
НА ВЫПУСКЕ АКАДЕМИКОВ КРАСНОЙ АРМИИ

Государственное издательство политической литературы  
Ереван • 1940